ԿԱՐԾԻՔ

Լիլիթ Հայկի Խաչատրյանի ,,Դեռահասների սեռադերային նույնականացման դեստրուկցիայի առանձնահատկությունները հոգեբանական հարմարման համատեքստում,, թեմայով ատենախոսության ԺԹ.00.03 ,,Սոցիալական հոգեբանություն,, մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության:

Դեռահասության տարիքային փուլը սոցիալականացման, օրգանիզմում տեղի ունեցող հոգեֆիզիոլոգիական բուռն փոփոխությունների առումով հանդիսանում է բարդ ժամանակաշրջան: Մարդաբանական գիտությունների համար դեռահասի օրգանիզմում, հոգեկան համակարգում դիտարկվող երևույթները հանդիսանում են հետաքրքիր տեղաշարժերի ուսումնասիրման օբյեկտ: Վերջին տասնամյակներում տեղի ունեցող համաշխարհային զարգացումների արդյունքում տարբեր մշակույթների ներթափանցումը հասարակություն, անմիջական ազդեցություն են ունենում սերունդների նոր գիտակցության ձևավորման գործընթացների վրա: Դեռահասունության տարիքային փուլը գիտական առումով հետաքրքիր ժամանակաշրջան է, քանի որ անցում է կատարվում մանկությունից պատանեկություն: Մյուս կողմից՝ սոցիալական միջավայրի ակտիվ զարգացումներն ու նրա նկատմամբ առաջադրվող խնդիրները լուրջ դժվարություններ են ստեղծում այս տարիքի երեխաների համար: Այդ իսկ պատճառով շատ երեխաներ այս փուլը անցնում են հետագա կյանքի համար ճակատագրական հանդիսացող բազմաթիվ փորձությունների միջով: Այս տեսանկյունից՝ խիստ կարևոր և արդիական է դառնում դեռահասների սեռադերային նույնականացման դեստրուկցիայի առանձնահատկությունների հիմնախնդրի ուսումնասիրումը: Տարբեր ոլորտներում արագորեն ձևավորվող նոր ,,ճշմարտությունների,, բազմազանությունները հատկապես ձևավորվող անձին գամում են ընտրանքների առջև, հոգեկան ոլորտին առաջադրում հզոր սթրեսորներ, որոնց հաղթահարման համար նա դեռևս պատրաստ չէ: Մյուս կողմից, նոր ժամանակներում ձևավորվող գաղափարների բազմազանության պայմաններում քիչ է ուսումնասիրված հոգեբանական հարմարման համատեքստում դեռահասի սեռադերային նույնականացման դեստրուկցիայի հիմնախնդիրը: Այս տեսանկյունից՝ Լիլիթ Հայկի Խաչատրյանի ,,Դեռահասների սեռադերային նույնականացման դեստրուկցիայի առանձնահատկությունները հոգեբանական հարմարման համատեքստում,, թեմայով ատենախոսական աշխատանքը խիստ արդիական է և ժամանակին: Ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, տեսական երկու գլուխներից, հետազոտության ռազմավարությունն ու մեթոդների բովանդակությունը, ինչպես նաև արդյունքների քննարկումները ներկայացնող երրորդ գլխից: Աշխատանքն ավարտվում է եզրակացություններով, առաջադրվող թրեյնինգային ծրագրով, օգտագործված 154 աղբյուր գրականության ցանկով և հավելվածներով:

Ատենախոսության **ներածության** բաժնում արտացոլված են թեմայի արդիականությունը, հիմնախնդրի ուսումնասիրման հայեցակարգային մոտեցումները,

հոգեբանական հարմարման համատեքստում դեռահասի սեռադերային նույնականացման դեստրուկցիայի բնույթը ներկայացնող գիտական հիմնական դրույթները: Տեղ են գտել նաև հիմնախնդրի ուսումնասիրման փուլերը, ինչպես նաև հետազոտության իրականացման ռազմավարական մոտեցումներն ու հիմնահարցի վերաբերյալ հեղինակի պատկերացումները: Ատենախոսության ներածության բաժնում արտացոլված դրույթները հիմնարար են, որոնք ամբողջական պատկերացում են տալիս կատարված աշխատանքների գիտագործնական կողմերի բովանդակության, հետազոտական տվյալների հավաստիության և դրանց հիման վրա արված եզրակացությունների վերաբերյալ:

Հետազոտոկան աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել հոգեբանական հարմարման համատեքստում դեռահասի սեռադերային նույնականացման դեստրուկցիայի բնույթը, դրա դրսևորման հոգեբանական առանձնահատկությունները, զարգացման փուլերը: Հիմնական դրույթներն ու ձևակերպումները արված են ատենախոսություններին ներկայացվող գիտական պահանջներին համապատասխան: Հստակ ձևակերպումներով ներկայացվում են հետազոտությյան համակազմը, մեթոդներն ու իրականացման պայմանները: Հստակ ձևակերպված են աշխատանքների իրականացման ողջ ռազմավարությունը, աշխատանքի գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, աշխատանքի գիտատեսական նորույթն ու նշանակությունը, կիրառականությունն ու դրանց հեռանկարը:

Արդյունքների գիտական քննարկումներն իրականացվել են Խաչատուր Աբովյանի անվ. ՀՊՄՀ – ի զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնում, զեկուցվել միջազգային համաժողովներում, առանձին արդյունքներ հրատարակվել են ՀՀ ԲՈԿ-ի կողմից հավատարմագրված գիտական հանդեսներում:

Ատենախոսական աշխատանքի ,,Դեռահասության տարիքի բնութագրումը հարմարման համատեքստում,, առաջին գլխում Լիլիթ Խաչատրյանը հանգամանորեն վերլուծում է դեռահասության տարիքային շրջափուլի առանձնահատկություններն ու դժվարությունները, որոնք արծարծվում են նաև բնագավառի խոշորագույն գիտնականների կողմից (Սամվել Խուդոյան, Շարլոտա Բյուլլեր, Կուրտ Լևին, Անրի Վալլոն, Էրիկ Էրիքսոն, և այլոք): Հեղինակը կարևորում է նաև միջառարկայական հիմնախնդիրներին վերաբերող աշխատություններում տեղ գտած արժեքավոր գաղափարները, որոնց վերլուծությունների շնորհիվ մեկնաբանել է իր կողմից ուսումնասիրվող հիմնախնդրի լուսաբանման կարևոր կողմերը (Ռ.Օդրի, Ն.Խաֆիզովա, Ի.Կոն, Մ.Միդ և այլք): Հարկ է նշել, որ դեռահասության տարիքի հոգեբանական բնութագրում պուբերտանտ զարգացման բաղադրիչը բազմաթիվ հեղինակների կողմից մեկնաբանվում է որպես դեռահասության տարիքային շրջաբաժանման հիմնարար գործոն, որն ընթանում է 5 փուլերով: Լիլիթ Խաչատրյանը բազմաթիվ հեղինակների աշխատանքների վերլուծությունների շնորհիվ վեր է հանում այդ փուլերում դեռահասների անատոմոմորֆոլոգիական, ֆիզիոլոգիական, հոգեբանական, սեռական հասունացման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների բնորոշ բնութագրիչները, հիմնական դժվարություններն ու հավանական զարգացումների դրական և բացասական միտումները: Հեղինակը կարևորում է դեռահասների ինքնագիտակցության հիմնախնդիրը, որը

ամբողջականացնում է նրանց պատկերացումները իրենց նկատմամբ, սեփական զգացումների ու ապրումների, տարբեր երևույթների նկատմամբ ձևավորվող ինքնագնահատականի ինչպես նաև վերաբերմունքի սոցիալ-հոգեբանական պատճառականությունները, դրսևորման յուրահատուկ առանձնահատկությունները: Առանձնակի կարևորություն է տրվում հասակակիցների հետ դեռահասի հարաբերությունների կառուցման ու սոցիալականացման գործընթացներում առաջացող հիմնախնդիրների հոգեբանական վերլուծություններին: Դրանցում առանձնակի տեղ են հատկացնում դեռահասների հարմարման համատեքստում տեղի ունեցող հոգեբանական տեղաշարժերի, ինչպես նաև կոնֆլիկտների ձևավորման նախադրյալներին ու դրանց յուրահատուկ դժվարություններին, դժվարությունների հաղթահարման սեռային տարբերությունների ու յուրահատկությունների բնութագրերին: Անդրադարձ է կատարվում նաև հոգեվերլուծական տեսություններին, որոնցում վերլուծվում են դժվարությունների ռացիոնալ կողմերը, ինչպես նաև դրանց վերաբերյալ տարբեր հեղինակների տեսակետները:

Դեռահասության տարիքը աչքի է ընկնում նաև իր ճգնաժամային հատկանիշներով, որոնք արտացոլված են Լ.Բոժովիչի, Վ.Կազանսկայայի, Ս. Խուդոյանի, Վ.Շապարի, Մ. Գոմեզոյի, Լ.Օոլովայի և այլոց աշխատություններում: Հեղինակները դեռահասի տարիքային ճգնաժամի հիմքում դիտարկում են ամենատարբեր գործոններ. ֆիզիկական հասունացման գործընթացներ, սեռական հասունացում, սեռային տարբերակման գործընթացներ, դրանցում դիտարկվող անոմալիաներ հոգեբանական ներքին և արտաքին կոնֆլիկտներ և այլն: Այնուհետև այս գլխում հեղինակը կարևորում է դեռահասների հոգեբանական հարմարման հիմնախնդիրը, որը նրա կարծիքով հիմք է հանդիսանում դեռահասի սոցիալականացման համար: Սակայն չի խուսափում նաև քննարկելու այլ հեղինակների տեսակետներ, որոնք համոզված են, որ հնարավոր է անձը լինի սոցիալականացված, սակայն հարմարված չլինել (Ա.Նալչաջյան, Ս.Ռոզում, Յու.Ֆրոլով,Ն.Յավորսկայա, Գ.Մաքուինը և այլոք): Միևնույն ժամանակ ընդհանրացնելով հեղինակների տեսակետները, ատենախոսը հիմնավորում է այն գաղափարը, որ դեռահասների սոցիալականացումը ապահովում է նրանց սոցիալական հարմարումը, իսկ վերջինս ապահովում է նրանց սոցիալ-հոգեբանական հասունացումը: Այնուհետև ներկայացնում է հեղինակների կողմից տարբերակված հարմարման ձևերը (ռադիկալ, գերհարմարում, ներդաշնակ հարմարում, կոմֆորտ հարմարում, դեվիանտ հարմարում, սոցիալ-հոգեբանական հարմարման ձախողում և այլն): Հեղինակը մանրամասն վերլուծությունների շնորհիվ վեր է հանում հարմարման նշված ձևերում դեռահասների հոգեֆիզիոլոգիական համակարգերում, վարքային դրսևորումներում ինչպիսի յուրահատուկ փոփոխություններ, նորագոյացումներ են առաջանում: Անդրադարձ է կատարվում նաև դեռահասի սոցիալականացման հիմնախնդրին, որում հիմնավորվում է այն գաղափարը, որ հարմարման և սոցիալականացման գործընթացները դեռահասի ինքնուրույնության ձևավորման և ինքնահաստատման գործընթացներն են, որոնք անցնում են լուրջ դժվարությունների միջով: Առանձնակի նշանակություն է տրվում ընտանիքին, և նրանում գոյություն ունեցող միջանձնային հարաբերություններին՝ որպես դեռահասի բազմակողմանի ձևավորման միջավայր, ֆիզիկական և

հոգեբանական անվտանգության ապահովման, դաստիարակության և սոցիալականացման հիմնական պայման և այլն:

Լիլիթ Խաչատրյանի ատենախոսական աշխատանքի 2-րդ՝ ,,Դեռահասության տարիքում սեռադերային նույնականացման հիմնախնդիրը,, խորագրով գլուխը նվիրված է սեռահասունացման և այդ ընթացքում դեռահասների կյանքում տեղի ունեցող առանձնահատուկ փոփոխություններին՝ ճգնաժամերին, սեռային ինքնագիտակցմանը, մարմնի, օրգանների ֆիզիկական փոփոխություններին, հորմոնալ աճին, երկրորդային սեռական նշաններին և այլն: Վերլուծության են ենթարկվում նաև հոգեվերլուծական տեսությունները, որոնցում շրջանառվում է այն գաղափարը, որ դեռահասի սեռական հասունացման փուլում առաջնային դեր է խաղում նրա կողմից իր մարմնական փոփոխություններին հարմարումը և համապատասխան սեքսուալ հակվածության ամրագրումը: Դեռահասության փուլում մեծանում են տղաների էրեկցիայի հաճախականությունը, աղջիկների մոտ՝ մարմնական զգացողությունը, սեքսուալ ապրումները: Այնուհետև հեղինակը քննարկում է դեռահասների սեռահասունացման հիմնախնդիրը, որում կարևորում է տարբեր գիտնականների տեսակետներ: Այստեղ առանցքային տեղ են գրավում դեռահասների մարմնի ֆիզիկական փոփոխությունների, առաջնային և երկրորդային սեռական նշանների, սեռահասունացման ընթացքում տեղի ունեցող փոփոխություններով պայմանավորված արական կամ իգական սեռին պատկանելիության զգացումների խնդիրները, միջավայրի սոցիալ-հոգեբանական ազդեցության և նրանց հետ տեղի ունեցող հավանական տեղաշարժերի հիմնախնդիրը և այլն: Տեսական վերլուծություններում քննարկվում են նաև սեռային դերերի, դրանց ձևավորման պայմանների, ազդող գործոնների հիմնախնդիրը: Դրանցում կարևորվում են ընտանիքի, հասարակության, աշխատանքի և պատմամշակութային գործոնների դերը, դրանց ազդեցության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, տարբեր հասարակություններում և մշակույթներում ֆեմինիզացիայի և մասկուլինացման երևույթների ընկալումները և այլն: Քննարկվում են նաև սեռերի նույնականացման և ինքնության հիմնախնդիրները, դրանց վերաբերյալ հոգեվերլուծական դպրոցների տեսակետները:

,,Սեռադերային նույնականացման դեստրուկցիայի բնութագրումը հարմարման համատեքստում,, ենթագլխում Լ.Խաչատրյանը մանրակրկիտ վերլուծությունների շնորհիվ բացահայտում է տարբեր գիտնականների աշխատություններում տեղ գտած դեստրուկտիվ վարքի ձևավորման սոցիալ-հոգեբանկան պատճառականություններն ու պայմանները (Ու. Մաստերս, Վ.Ջոնսոնս, Ռ.Կոլոդնի, Մ.Գոմեզո, Ե.Պետուվա, Լ. Օռլովա,Վ.Կագան և ուրիշներ): Պարզաբանվում են ֆիզիկական, հորմոնալ, հուզական, ինտելեկտուալ զարգացման ընթացքում աղջիկների և տղաների պատկերացումներում դեստրուկտիվ վարքի դրսևորման սեռային տարբերակումները, նրանց սեռադերային ակտիվության դրսևորման առանձնահատկությունները հարմարման համատեքստում: Վերլուծություններում բացահայտվում են նաև դեռահասի ինքնագիտակցության արթնացման և տարբեր գործոններով պայմանավորված նրա դինամիկ փոփոխությունների ազդեցությունը դեստրուկտիվ մտքերի, գաղափարների ձևավորման վրա: Մանրակրկիտ վերլուծությունների շնորհիվ բացահայտվում են

տարբեր հեղինակների աշխատանքներում տեղ գտած դեռահասների պատկերացումները կանացիության, տղամարդկային առնականության, միջանկյալ սեռայնության, սեռափոխության վերաբերյալ, ինչպես նաև այդ պատկերացումների ձևավորման սոցիալ-հոգեբանական, ֆիզիոլոգիական մեխանիզմները:

Գենդերային խանգարումներին վերաբերվող խնդիրներին անդրադառնալիս, հեղինակը վերլուծում է հոգեբուժության, էնդոկրինոլոգիայի բնագավառներում գոյություն ունեցող տեսակետների վերլուծություններին, որը ամբողջականացնում է հիմնախնդրի ուսումնասիրման բազմակողմանիության պահանջը (Անտոկի, Բառոետ, Բլոսկ,Սավինա և այլք): Այնուհետև ներկայացվում են վերջին տասնամյակների ընթացքում Համաշխարհային Առողջապահական Կազմակորպության, Ամերիկյան Հոգեբուժական Ասոցիացիայի կողմից հիվանդությունների և շեղումների վերաբերյալ դասակարգումների պահանջները, որոնցում կարգավորվում են մանկական սեռային նույնականացման խանգարումները, երեխաներին և մեծահասակներին բնորոշ տրանսսեքսուալիզմի դրսևորումները: Ատենախոսության հեղինակը վերլուծում է նաև գենդերային կարծրատիպերի խանգարման, ինչպես նաև հոգեսեռական զարգացումների խանգարման արդյունքում առաջացող վարքի փոփոխությունները, սեռային ինքնագիտակցությանը, հակառակ սեռին բնորոշ սեռադերային վարքագծի ընդօրինակման կամ նույնականացման հիմախնդիրները:

Այնուհետև Լիլիթ Խաչատրյանի կողմից ներկայացվում են հիմնախնդրին վերաբերող սեփական դիտարկումների և ուսումնասիրությունների արդյունքները, որոնք աղյուսակի տեսքով զետեղված են ատենախոսական աշխատանքի 75-րդ էջում: Հիմնախնդրի վերլուծության այս ենթագլուխը ավարտվում է հեղինակի կողմից արված տեսական ուսումնասիրությունների ամփոփ եզրակացություններով:

Ատենախոսական աշխատանքի ,,Փորձարարական հետազոտության կազմակերպումն ու արդյունքները,, վերնագրով 3-րդ գլխում ներկայացվում են փորձարարական հետազոտության կազմակերպման ռազմավարությունը, հետազոտության առանձնահատկությունները, մեթոդները, դրանց բովանդակությունն ու կիրառման նկատմամբ գոյություն ունեցող գիտական պահանջները: Ատենախոսական աշխատանքի հիմնական էքսպերիմենտալ հետազոտությունների իրականացման և առաջադրված խնդիրների լուծման նպատակով ընտրվել են 12 մեթոդներ, որոնցում տեղ են գտել պրոյեկտիվ, անկետավորման, հարցարանների, հարցազրույցների, դիտման, փորձագիտական գնահատման և այլ մեթոդներ: Հստակեցված և ապահովված են հետազոտության համակազմի, ինչպես նաև մեթոդների ընտրության պայմանները, արդյունքների վիճակագրական վերլուծության պահանջները, դրանց խմբավորման ու մեկնաբանման գիտականությունը: Հետազոտության արդյունքները առանձնակի կարևորվում են իրենց բազմակողմանի հոգեբանական վերլուծություններով, արվող հետևություններով և եզրակացություններով: Ստացված արդյունքները ըստ հետազոտության կառուցվածքի, խնդիրների լուծման առաջնահերթության, ներկայացվում են անհրաժեշտ գիտական լեզվով: Հետազոտության մեթոդներից ստացված մաթեմատիկական արժեքները, դրանց վիճակագրական վերլուծությունները արտացոլված են աղյուսակների, հիստագրամների և գծագրերի տեսքով: Հետազոտություններն իրականացվել են

հանրապետության տարբեր համայնքներում ապրող 826 դեռահասների հետ (413-ը տղաներ 413 աղջիկներ): Ընտրանքում տեղ են գտել նաև նրանց ուսուցիչները՝ թվով 120 մասնագետ, և դեռահասների ընտանիքի անդամներ՝ 195 մարդ, ինչպես նաև նրանց հոգեբանները՝ թվով 15 մարդ: Աշխատանքներն իրականացվել են 4 փուլերով, որոնցում իրականացվող աշխատանքների հերթականությունն ու բովանդակությունը բխում է հիմնական նպատակի իրականացման պահանջներից:

Փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծության ենթագլխում Լիլիթ Խաչատրյանի կողմից մեթոդ առ մեթոդ ներկայացվում են դեռահասների հետազոտության տվյալները, որոնք աղյուսակների, հիստագրամների, նկարների ու գծագրերի տեսքով արտացոլում են հարմարման համատեքստում սեռային նույնականացման դեստրուկցիայի առանձնահատկությունները: Յուրաքանչյուր մեթոդից ստացված արդյունք զուգակցվում է հոգեբանական վերլուծություններով և լուծվող խնդրին համապատասխան վիճակագրական տվյալների անհրաժեշտ աղյուսակներով, կամ գծագրերով, որոնք եզրափակվում են համապատասխան հետևություններով և եզրակացություններով:

Հետազոտության արդյունքում հեղինակի կողմից բացահայտվել են մի շարք կարևոր առանձնահատկություններ և հոգեբանական օրինաչափություններ:

Մասնավորապես բացահայտվել են.

- տղաների և աղջիկների անդրոգենության պատկերացումների սեռային տարբերությունները, (տարիքային զարգացմանը զուգընթաց տղաների խմբում այն թուլանում է, իսկ աղջիկներինը ուժեղանում): Պարզվել է նաև վաղ դեռահասության շրջանում տղաների սեռադերային հատկանիշների տարբերակման բացակայության օրինաչափությունները: Աղջիկների խմբում ուշ դեռահասության շրջանում սեռադերային նույնականացման դինամիկան ուղղված է արտահայտված անդրոգինության: Տղաների շրջանում տարիքային աճին զուգահեռ ուժեղանում են սեռադերային նույնականացման կարծրատիպացման գերծընթացները:
- Բացահայտվել են նաև ուսուցիչների վերաբերմունքի փոփոխության առանձնահատկություններ, որոնք ընդգծվում են հատկապես երեխաների ուշ դեռահասության տարիքային փուլում: Սեռադերային նույնականացման դեստրուկտիվ հատկանիշների դրսևորման պարագայում բացահայտվել են ընտանիքի ունեցած բացասական դերը: Ձևափոհությունները հիմնականում արտահայտվում են դեռահասների հոգեբանական օտարացման ձևով: Բացահայտվել են նաև ստուգիչ և փորձարարական խմբերի դեռահասների և միջավայրի միջև գոյություն ունեցող կապերի առանձնահատկությունները (հասակակիցների, ուսուցիչների, ինչպես նաև ծնողների միջև):
- Հետազոտությունների շնորհիվ բացահայտվել են նաև դեռահասների հավակնությունների մակարդակի և ինքնագնահատականի անկման պատճառական կապերը, որոնք հեղինակի կողմից դիտարկվում են որպես սեռադերային նույնականացման դեստրուկցիայի արդյունք: Հետազոտվող երկու հիմնական խմբերում դեստրուկցիայի առավել նշանակալի կապեր են հայտնաբերվել ծնողավարման թշնամական, դիրեկտիվ և անհետևողական

վերաբերմունքի ձևերով, ինչը չի արտահայտված ստուգիչ խմբի դեռահաս տղաների և աղջիկների ցուցանիշներում: Սեռադերային նույնականացման դեստրուկցիայի նշաններն արտահայտվում են սեփական սեռի մերժման, հակառակ սեռին պատկանելիության միտումներով: Սեփական սեռի նկատմամբ բացասական վերաբերմունքի դրսևորումը արտահայտվում է նրանց կողմից արվող հանձնարարություններում, որը պատճառաբանված է իրենց չներկայացնելու, հակառակ սեռին արտահայտված ներկայացնելու հանգամանքով:

Հարկ է նշել, ատենախոսական աշխատանքի նշված գլխում տեղ գտած բոլոր ձևակերպումներն ու դրույթները լիովին համապատասխանում են հետազոտական աշխատանքների իրականացման բոլոր պահանջներին և գիտական թեմայում առաջադրված փորձարարական խնդիրների լուծմանը:

Աշխատանքում տեղ են գտել որոշ բացթողումներ և առանձին թերություններ, որոնց մասին կուզեինք ներկայացնել.

1. Կարծում ենք, որ թեկնածուական ատենախոսության համար կարիք չկա կիրառել 12 հետազոտական մեթոդներից բաղկացած համալիր, որը ավելորդ ծանրաբեռնում է ինչպես ատենախոսության ծավալային պահանջները, այնպես էլ դժվարացնում հեղինակի աշխատանքը:
2. Համակազմը ընտրված լինելով հանրապետության գրեթե բոլոր մարզերից, այնուամենայնիվ ներկայացված չէ թե ինչպիսի տարբերություններ են դիտարկվում մայրաքաղաքի, կենտրոնական մարզերի և ծայրամասերում ապրող դեռահասների շրջանում հարմարման համատեքստում սեռային նույնականացման դեստրուկցիայի առանձնահատկությունները:
3. Կարծում ենք նպատակահարմար կլիներ մշակված թրեյնինգային համալիրի գործնական կիրառումից հետո նույնպես իրականացվեին դեռահասների սեռային նույնականացման դեստրուկցիայի հետազոտման միևնույն պարամետրերը, որով կբացահայտվեին նրանց տարիքային փոփոխություններին զուգահեռ տեղի ունեցող փոփոխություններն ու դրանց տարիքային և սեռային տարբերակումները: Այլապես, պարզ չէ թրեյնինգային ծրագրի արդյունավետության, դեռահասների այս կամ այն տարիքի, սեռի դեռահասների խմբում դրա կիրառման նպատակահարմարության գիտական հիմնավորումը:
4. Օգտագործված գրականության ցանկում տեղ են գտել որոշ տեխնիկական բացթողումներ, որոնցում կամ նշված չեն գրականության էջերը, կամ բաց է թողնված հրատարակության անվանումը (էջ՝ 131,132,133,134 և այլն):

Արված դիտողությունները բոլորովին չեն ստվերում Լիլիթ Խաչատրյանի ատենախոսական աշխատանքի բովանդակությունն ու գիտական արժանիքները: Դեռ ավելին՝ ատենախոսական աշխատանքը արժեվորվում է տեսական և հետազոտական խնդիրների լուծման գիտական բարձր մշակույթով, տեսական և կիրառական խնդիրների առաջադրման էթիկայի պահպանմամբ, գրագետ ձևակերպումներով և հիմնարար եզրակացություններով, որը խոսում է հեղինակի գիտական հասունության և առաջադրված հիմնախնդրի լիարժեք տիրապետման մասին:

Ատենախոսական աշխատանքը իր բովանդակությամբ տեսական խնդիրների վերլուծության բարձր մշակույթով, էքսպերիմենտալ հետազոտությունների կազմակերպման, արդյունքների մշակվածության և եզրակացությունների ձևակերպման գիտականությամբ լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ատենախոսություններին ներկայացվող բոլոր պահանջներին:

Սեղմագրի բովանդակությունը և հիմնական դրույթների գիտական ձևակերպումները համապատասխանում են ատենաոսության բովանդակությանը:

Ատենախոսական աշխատանքի հեղինակ Լիլիթ Հայկի Խաչատրյանը իր կողմից ներկայացված ,,Դեռահասների սեռադերային նույնականացման դեստրուկցիայի առանձնահատկությունները հոգեբանական հարմարման համատեքստում թեմայով ԺԹ.00.03 ,,Սոցիալական հոգեբանություն,, մասնագիտությամբ ատենախոսության համար արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Հոգեբանական գիտությունների դոկտոր՝ Մ.Պ.Մկրտումյան

ՀՊՄՀ-ի գիտական ղեկավարի պրոռեկտոր՝ Մ. Իսպիրյան

Հոգ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Մ.Պ.Մկրտումյանի ստորագրությունը հաստատում եմ:

11. 2023.